ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. սեպտեմբերի 18-ին, N 417 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ.ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 181-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով, 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 2.2 կետի պահանջները՝ որոշում եմ.

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Գ.Ղափանցյանի անվան հ.4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 181-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

18.09.2024

X

VERIFIED OCSP 18.09.2024 11:04:16 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ